# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 11 - 12 (16406) ՇԱԲԱԹ, 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է ՎՐԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԵՐԿԻՐ»




*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Բրյուսելում: Այցի շրջանակներում, Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպումներ ունեցավ Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, եվրահանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերի, Եվրամիության ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերի եվրակոմիսար Յոհաննես Հանի, Եվրամիության միգրացիայի, ներքին գործերի եւ քաղաքացիության հարցերով եվրակոմիսար Դմիտրիուս Ավրամապուլոսի, Եվրամիության կլիմայի եւ էներգառեսուրսների հարցերով եվրակոմիսար Միգել Կանետի, Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Հերբերդ Զալբերի, պաշտոնական այլ անձանց հետ:*

Եվրոպայի խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի հետ հանդիպմանը, կողմերը քննարկեցին Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրով նախատեսված բարեփոխումների իրականացման շրջանակներում Վրաստանի ձեռքբերումների եւ այցեգրերի ազատականացման հարցը:

Հանդիպման ավարտին հաջորդած համատեղ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող եվրախորհրդարանի պատվիրակության հետ:*



Հանդիպմանը կողմերը քննարկեցին այցեգրերի ազատականացման գործընթացի, ինչպես նաեւ Վրաստանի համար եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման նշանակության հետ առնչվող հարցեր: Գիորգի Մարգվելաշվիլին եվրախորհրդարանականներին տեղեկատվություն ներկայացրեց երկրի քաղաքական իրավիճակի մասին:

Հանդիպմանը առանձնակի շեշտվեց առաջիկա խորհրդարանական ընտրությունները ժողովրդավարական իրավիճակներում անցկացնելու անհրաժեշտությունը:

Նախագահի՝ Հավլաբարի նստավայրում տեղի ունեցած հանդիպմանը, ներկա էին նախագահի աշխատակազմի ղեկավարը, ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, Վրաստանի նախագահի խորհրդականները եւ Վրաստանի պահպանողական կուսակցության ղեկավարները:

ՆԱԽԱԳԻԾ

## ՄԱՄՈՒԿԱ ԽԱԶԱՐԱՁԵ. «ԱՆԱԿԼԻԱՅԻ ՆԱՎԱՀԱՆԳՍՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԿԱԶՄՈՒՄ Է 2,5 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ»

### ԽՈՐՋՐՅԱ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏԸ ԿԿԱՌՈՒՑԻ ՎՐԱՑ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԸ

*Վրաստանը պատրաստ է Սեւ ծովում խոշոր նավահանգիստ կառուցել, որը ընկած կլինի Չինաստանի եւ Եվրոպայի միջեւ ձգվող նոր Մետաքսի ճանապարհի վրա: Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, նախագիծը կիրականացվի Անակլիա քաղաքում՝ Սեւ ծովի արեւելյան ափին: Նրա խոսքերով, նոր նավահանգիստը Վրաստանի եւ ողջ կովկասյան տարածաշրջանի համար հսկայական հնարավորություններ կստեղծի:*




Վրաստանում Անակլիայի խորջրյա նավահանգիստը կկառուցի JSC ANAKLIA DEVELOPMENT CONSORTIUM կոնսորցիումը, որի մեջ մտել են վրացական TBC Group եւ ամերիկյան The Conti Group ընկերությունները:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## 140 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

*Արեւելք-Արեւմուտք ճեպընթաց մայրուղու Վերին Օսիաուրի-Չումաթելեթի հատվածի ֆինանսավորման նպատակով, Համաշխարհային բանկը Վրաստանին հատկացրել է 140 միլիոն ԱՄՆ դոլար:*

Ինչպես տեղեկացրեց Վրաստանի ֆինանսների նախարարությունը, Համաշխարհային բանկը շարունակում է Վրաստանի գլխավոր տրանսպորտային մայրուղու նորացման աջակցությունը: Վրաստանի եւ Համաշխարհային բանկի վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ ստորագրվեց «Արեւելք-Արեւմուտք» ճեպընթաց ավտոմայրուղու միջանցքի բարելավման նախագծի» (արագընթաց մայրուղու Վերին Օսիաուրի-Չումաթելեթի հատված) ֆինանսավորման նպատակով, 140 միլիոն ԱՄՆ դոլար հատկացնելու մա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ԱՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ Է

*Հայաստանի Կենտրոնական բանկի պատվիրակությունը ծանոթանում է բանկային հսկողության ոլորտում Վրաստանի ազգային բանկի (ՎԱԲ) բարեփոխումներին ու փորձին:*



«Վրաստանի ազգային բանկը հսկողության բավականին առաջադիմական մոտեցում եւ գործիքներ է մշակել: Վերջին տարիների ընթացքում զգալիորեն ընդլայնվել են հսկողության շրջանակները: Մենք ցանկանում ենք այսուհետեւ էլ շարունակել փորձի փոխանակումը, ինչը կօգնի կողմերին ավելի արդյունավետորեն զարգացնել ռիսկերի վրա հիմնված հսկողության համակարգը»,- հայտարարեց Հայաստանի ԿԲ-ի ռիսկերի վրա հիմնված հսկիչ նախագծի մենեջեր Դեւիդ Բաբասյանը:

Նա նշեց, որ Վրաստանը եւ Հայաստանը համանման մարտահրավերներ ունեն ֆինանսական ինստիտուտների կարգավորման եւ հսկողության հարցերում, ուստի, այս հանդիպումը շատ կարեւոր է:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ



## ԿԱԽԱ ՕՔՐԻԱՇՎԻԼԻ. «ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՄԵԾԱՑՆՈՒՄ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ»

*Ինչպես արդեն հաղորդել ենք, փետրվարի 3-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ամենամյա հաշվետվությամբ հանդես եկավ երկրի խորհրդարանի առջեւ: Նախագահի ելույթից հետո, խորհրդարանի ամբիոնից իրենց դիտողություններով ու առաջարկություններով ելույթ ունեցան խորհրդարանական մեծամասնության եւ փոքրամասնության լիդերները, խորհրդարանական խմբակցությունների ղեկավարները: Ելույթ ունեցողներից ամենանշանակալիցը, փորձագետների գնահատմամբ, խորհրդարանի «Անկուսակցական անկախ մեծամասնականներ» խմբակցության նախագահ, Դմանիսիի շրջանից մեծամասնական պատգամավոր Կախա Օքրիաշվիլու ելույթն էր: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Կախա Օքրիաշվիլու ելույթը աննշան կրճատումներով:*

- Առաջին հերթին, ցանկանում եմ անդրադառնալ այն ոչ սխալ կարծիքներին, որոնք, չգիտես ինչու, կողմ են մեծամասնական ընտրական համակարգի վերացմանը:

2015 թվականի մայիսի 30-ին Վրաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցած հանդիպմանը, որին ներկա էին խորհրդարանական եւ ոչ խորհրդարանական ընդդիմության, ինչպես նաեւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները: Հանդիպմանը պարզեցի, որ ես միակ մեծամասնական պատգամավորն էի, ով ներկա գտնվեց այդ միջոցառմանը: Քննարկվում էր ընտրական համակարգի հարցը: Ձեր ուշադրությունը ցանկանում եմ բեւեռել այն փաստի վրա, որ մեծամասնական ընտրահամակարգի վերացման դեմ հանդես եկող հասարակության լայն շրջաններից միայն ես էի ներկա: Հանդիպմանը ներկա էր միայն հասարակության այն հատվածը, որը համաձայն էր մեծամասնական ընտրակարգի վերացման հետ: Զարմացրեց այն փաստը, որ չէր ապահովվել հանդիպմանը նախկին կամ գործող հասարակական աչքի ընկնող գործիչների, մեծամասնական պատգամավորների եւ ճանաչված կոնստիտուցիոնալիստների մասնակցությունը:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է ՎՐԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԵՐԿԻՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մանլը ասուլիսում նշվեց, որ Վրաստանը հաջողությամբ իրականացրել է այցեգրերի ազատականացման ուղղությամբ Եվրամիության տեխնիկական պահանջները, հետեւաբար, մոտ ժամանակներում Վրաստանի քաղաքացիների համար կսահմանվի անայցեգրային պայմանակարգ: Վարչապետի խոսքերով, անայցեգրային պայմանագրի հաստատումը կդառնա Վրաստանի եվրոպական ընտրության կոնկրետ արգասիքի արտահայտություն:

Անդրադառնալով ընտրությունների թեմային՝ Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ իր գլխավորած կառավարությունը կապահովի ազատ եւ արդարացի ընտրությունների անցկացումը, կշարունակի դատական համակարգի բարեփոխումը եւ առավելագույնս կնպաստի քաղաքացիական հասարակության ներգրավման գործին: Վարչապետի հավաստմամբ, Վրաստանը եվրաինտեգրման ճանապարհին իր ձեռքբերումներով օրինակելի կդառնա ողջ տարածաշրջանի համար:

Բրյուսելում կայացած հանդիպումներին ներկա էին Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն եւ Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# 140 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

սին: Համաձայնագիրն ստորագրեցին Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին եւ Համաշխարհային բանկի Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրեն Ներսի Տենբոնը:

Նախագծով նախատեսված է Վերին Օսիաուրի-Չումաթելեթի 14,1 կիլոմետրանոց հատվածի նոր քարաշերտ ճանապարհի շինարարությունը: Վերոնշյալ հատվածի 8,3 կիլոմետրի շինարարությունը կֆինանսավորի Համաշխարհային բանկը: Համաշխարհային բանկի հետ միասին նախագիծը ֆինանսավորում է Եվրոպայի ներդրումային բանկը, որն այդ նպատակով հատկացրել է 49,45 միլիոն եվրո:



Նախագիծն իրենից ներկայացնում է Արեւելք-Արեւմուտք արագընթաց ավտոմայրուղու շարունակությունը, որի շինարարության ֆինանսավորման նպատակով, ներկա դրությամբ, միայն Համաշխարհային բանկի կողմից հատկացվել է 367 միլիոն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում:

ՆԱԽԱԳԻԾ

# ՄԱՄՈՒԿԱ ԽԱԶԱՐԱՁԵ. «ԱՆԱԿԼԻԱՅԻ ՆԱՎԱՀԱՆԳՍՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԿԱԶՄՈՒՄ Է 2,5 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Համապատասխան որոշումն ընդունվել է Անակլիայի խորջրյա նավահանգստի կառուցման մեկ տարի առաջ հայտարարված մրցույթի արդյունքներով: Մրցույթի վերջին փուլին մասնակցեցին նաեւ չինական ու բրիտանական կոնսորցիումները:

Անակլիայի նավահանգստի եւ ազատ ինդուստրիալ գոտու կառավարումը հանձնվելու է համաշխարհային ճանաչման արժանացած ընկերություններին: Այդ մասին հայտարարեց «Անակլիայի զարգացման կոնսորցիում» շինարարական ընկերության հիմնադիր Մամուկա Խազարաձեն:

Նրա հայտարարությամբ, նավահանգստի ներդրումային ողջ արժեքը կազմում է 2,5 միլիարդ դոլար, եւ գումարի մեծ մասը իրացվելու է ներդրման առաջին փուլում:

Մամուկա Խազարաձեն նշեց, որ նավահանգստին կից 600 հեկտարի վրա կհիմնվի ազատ ինդուստրիալ եւ տնտեսական գոտի, ինչն անհրաժեշտ է նավահանգստի առաջիկա զարգացման համար:

Ինչպես ծրագրված է, Անակլիայի խորջրյա նավահանգստի տարեկան բեռնաշրջանառությունը կկազմի 100 միլիոն տոննա: Շինարարությունը կընթանա մի քանի փուլով՝ կապված նավահանգստի հնարավորությունների աստիճանական ընդլայնման հետ:

Վրաստանի կառավարությունը նախատեսում է, որ նոր նավահանգիստ կարող են մտնել բեռնատար նավեր, որոնց համար երկրի մյուս նավահանգիստները չափազանց փոքր են: Վրաստանի կառավարությունը պատրաստ է նախագծի համար 100 մլն դոլար հատկացնել, մնացած ծախսերն իր վրա կվերցնի վրաց-ամերիկյան Anaklia development Consortium ընկերությունը: Շինարարական աշխատանքները պետք է սկսվեն 2016-ի վերջին եւ ենթադրաբար կտեւեն 3 տարուց ոչ քիչ:

ԱՆՎՏԱՆԳ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

# ՊԱՏՐԱՍՏ Է ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

***Ճանապարհային անվտանգության ռազմավարությունն արդեն պատրաստ է: Փաստաթուղթը, որը ոչ կառավարական կազմակերպությունների հանձնարարականներով մի քանի անգամ խմբագրվել է, մոտ ժամանակներում կներկայացվի կառավարությանը:***

Նման ռազմավարության մշակման անհրաժեշտությունը պայմանավորեց այն վիճակագրությունը, ըստ որի, վերջին մեկ տարվա ընթացքում ավտոճանապարհային պատահարների, դրանց ժամանակ զոհվածների ու տուժածների թիվը նշանակելիորեն աճել է: Այսպես, տարվա ընթացքում ավտովթարների արդյունքում զոհվածների թիվն ավելացել է 90-ով, իսկ մարմնական վնասվածք ստացողների թիվը՝ 20 տոկոսով:

Նշենք, որ ոչ կառավարական կազմակերպությունները դժգոհություն են հայտնել ճանապարհներում հաստատված իրավիճակի հիմնարար վերլուծության, ինչպես նաեւ ճանապարհային ենթակառույցների բացակայության պատճառով:

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ԿՈՆՏԱԿՏԻ ՊԱՐԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

***Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, հաշվի առնելով հասարակության շահագրգռվածությունը, առանց կոնտակտի պարեկության կապակցությամբ, հանդես եկավ պարզաբանումներով:***

Ինչպես ասված է գերատեսչության հայտարարության մեջ, վերջին օրերին լրատվամիջոցներում նպատակամղված կերպով շահարկում են թեման, ըստ որի, Վրաստանի ՆԳ նախարարությունը սկսում է «գաղտնի» հետեւելը: Չնայած, որ ՆԳ նախարարությունը բազմիցս փաստավորված պարզաբանել է, որ առանց կոնտակտի պարեկությունը հետեւելու հետ ոչ մի կապ չունի, ակնհայտ է, որ սխալ մեկնաբանություններով փորձում են հասարակությանը գցել թյուրիմացության մեջ:

Վերջին երկու-երեք տարիների ընթացքում, Վրաստանում ավտոմեքենաների թիվը ավելացել է 20 տոկոսով, ավելացել է նաեւ ճանապարհների ծանրաբեռնվածությունը եւ ավտոտրանսպորտային պատահարների ռիսկը:

Գերատեսչության հայտարարության համաձայն, իրենք պարտավոր են գործուն միջոցներ ձեռնարկել իրավիճակի կարգավորման ուղղությամբ: Դրանցից մեկը առանց կոնտակտի պարեկության հաստատումն է, ինչպես նաեւ անվտանգ երթեւեկության նոր նախագծի կիրարկումը, որի գլխավոր նպատակը մարդկանց կյանքի եւ անվտանգության ապահովումն է:

Նախարարության հավաստմամբ, առանց կոնտակտի պարեկությունը իրականացվում է արեւմտյան շատ երկրներում, եւ այն իրեն արդարացրել է:

Նախագծի համաձայն, առանց կոնտակտի պարեկությունը վարորդական իրավունքով տրված միավորները չի նվազեցնում: Ինչ վերաբերում է տեղեկատվական հատուկ նշանների տեղակայմանը, ապա այդ հարցը կկարգավորվի ոստիկանության մասին օրենքով, որի 27 հոդվածի երկրորդ կետում նշվում է, որ տեսատեխնիկայի օգտագործման մասին տեղեկատվությունը պետք է տեղակայվի երեւացող տեղերում:



ՆԱՏՕ

## ԱԼՅԱՆՍԸ ԿԸՆԴԼԱՅՆՎԻ

*ՆԱՏՕ-ի պաշտպանության նախարարները որոշում են կայացրել Արեւելյան Եվրոպայում ընդլայնել Դաշինքի ներկայությունը: Այս մասին հայտնեց Դաշինքի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը:*

*Նա ընդգծեց, որ ներկայության ընդլայնումը կապահովի ՆԱՏՕ-ի ուժերի բազմազգ խմբավորումը: «Մեր ներկայությունը Արեւելքում կուժեղացվի այնքան, որքան պետք է, որովհետեւ մենք պետք է հնարավորություն ունենանք պաշտպանել մեր դաշնակիցներին բոլոր սպառնալիքներից»,- ասաց նա:*

ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՌԱԶՄԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐ ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒՄ

*Ռուսաստանի Դաշնության ռազմածովային ուժերի կասպյան նավատորմի 20 նավեր Հարավային ռազմական շրջանի (ՀՌՇ) հանկարծական ստուգման շրջանակում վարժանքներ են անցկացրել Կասպից ծովում, որտեղ ծովային, առափնյա եւ օդային թիրախների վրա հրթիռային եւ հրետանային համալիր կրակոցներ են կատարում:*

*Վարժանքների անցկացման ժամանակաշրջանում ծովագնացության անվտանգությունն ապահովելու համար մոտ 1,5 հազար ծովային մղոն (2,5 հազար կմ-ից ավելի) ընդհանուր երկարությամբ ծովային հրաձգարանը քաղաքացիական նավագնացության համար փակվել է:*

ՄՄԿ

## ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԵՎՍ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՄԻԳՐԱՆՏԻ ԺԱՄԱՆՈՒՄ

*Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) կանխատեսում է, որ 2016 թվականին Եվրոպայում սպասվում է եւս 1 մլն միգրանտների ժամանում:*

*ՄՄԿ-ի տվյալներով, 2015 թվականին Միջերկրական ծովով Եվրոպա է հասել 1 մլն 4 հազար 356 գաղթական: Փախստականների այս հսկայական հոսքը կարող է կանգնեցնել միայն Սիրիայի իրադրության արմատական փոփոխությունը: Վերջին ժամանակներս եվրոպական աշխարհամաս ժամանած միգրանտների 91 տոկոսը կազմում են երեք երկրից՝ Սիրիայից, Աֆղանստանից եւ Իրաքից փախստականները:*

ԹԱՅՎԱՆ

## ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

*Փետրվարի 6-ի գիշերը Թայվանում տեղի ունեցավ 6,4 մագնիտուդով երկրաշարժ: Կղզու Թայնան հատուկ մունիցիպալիտետում ավերվել են մի քանի տասնյակ շինություններ: Զոհվածների թիվը, ըստ վերջին պաշտոնական տվյալների, հասել է 55-ի: Շուրջ 80 մարդ համարվում է անհայտ կորած: Փրկարարները ավերված շենքի փլատակներից կենդանի դուրս են բերել ութամյա մի աղջնակի, որը 60 ժամ անցկացրել է ավերակների մեջ:*

ԱՄՆ

## ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 19 ՏՐԻԼԻՈՆԻ ԲՆԱԳԻԾԸ

*ԱՄՆ-ի կառավարությունը պաշտոնապես հաստատել է պետական պարտքի չափը, որը կազմել է 19 տրիլիոն դոլար:*

*Վերջին տվյալների համաձայն, նախագահ Բարաք Օբամայի վարչակազմն այդ նշագիծը հատել է անցած շաբաթվա վերջին:*

*Հունվարի 29-ի դրությամբ, պարտքը կազմել է 19,013 տրլն դոլար:*

*Նշենք, որ Օբաման նախագահի պաշտոնն ստանձնել է 10,6 տրլն դոլար պարտքով եւ Սպիտակ տանը գտնվելու յոթ տարվա ընթացքում այն մեծացրել է ավելի քան 8 տրլն դոլարով:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԸՆԴԳԾՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ



***Տարածաշրջանային ուղերթի շրջանակներում, Թբիլիսիում էր գտնվում Շվեդիայի արտաքին գործերի նախարար Մարգոտ Վալլստրեմը: Այցի շրջանակներում, հյուրի հետ հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին:***

Հանդիպումներում քննարկվեցին երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր, ինչպես նաեւ տարածաշրջանում ստեղծված իրավիճակը: Առանձնակի ուշադրություն հատկացվեց Վրաստանի եվրաինտեգրման հարցին, ընդգծվեց, որ Վրաստանն այցեգրերի ազատականացման կապակցությամբ սպասում է քաղաքական որոշման:

Հանդիպմանը անդրադարձան նաեւ առաջիկա խորհրդարանական ընտրություններին, նշվեց, որ դրանք պետք է անցկացվեն ժողովրդավարական բարձր չափորոշիչներին համապատասխան:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՄԱՐԴԻԿ ՉԵՆ ՎՃԱՐԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՀԱՄԱՐ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի արդարադատության նախարարությունը, կեղծված փաստաթղթերի կապակցությամբ նախարարության հայտարարության համաձայն, համաներումը վերաբերում է այն անձանց, ովքեր անձնական վկայականը, կեցության վկայականը, անձնագիրը, ճանապարհորդական փաստաթուղթը, քաղաքացիական ակտի գրանցումը, ծննդյան վկայականը կամ այլ քաղաքացիական ակտի գրանցման վկայականը կեղծել են մինչեւ 2009 թվականի հունվարի 1-ը, նաեւ այն անձանց, ովքեր կեղծված փաստաթուղթը կամ տվյալները օգտագործել են մինչեւ համաներման օրենքի կիրառումը եւ, ովքեր իրենց նախաձեռնությամբ հայտարարում են դրա մասին:

Փաստաթղթերի կեղծման մասին համաներումը վերաբերում է մինչեւ 2009 թվականի հունվարի 1-ը եւ գործում է միայն այն դեպքում, եթե քաղաքացին իր նախաձեռնությամբ, դիմում է արդարադատության նախարարություն, հասարակական կենտրոններին կամ մեր տարածքային մյուս ծառայություններին: Նրանք, ովքեր դարձել են մեխանիկական սխալի զոհ, ազգանվան, անվան կամ վկայականի գրանցման, այլ սխալի միանշանակ ուղղման համար ոչինչ չեն վճարի»,- հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԵՐԿՐԻ ՄԱՍՇՏԱԲՈՎ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ԿՀԱՎԱՍԱՐԵՑՎԵՆ



***Ինչպես հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն, ներկայումս ակտիվ աշխատանք է տարվում, որ երկրի բնակչության համար սահմանվեն միանման սակագներ:***

Այդ մասին էներգետիկայի նախարարը հայտարարեց Գուրջաանիում՝ մեկնաբանելով Թելավիի շրջանի բնակիչների համար ապրիլի 1-ից գազի սակագինը 48-ից մինչեւ 59 թեթրի հասցնելու տեղեկատվությունը:

Կախի Կալաձեի խոսքերով, այդ որոշումն ընդունվել էր 2008-2009 թվականներին: «Նախորդ կառավարության կողմից դա արվել էր առանձնապես տարածաշրջաններում գազիֆիկացման գործընթացի խրախուսման համար, որպեսզի այդ աշխատանքները իրականացնեին ոչ միայն «Սոկարը» եւ պետությունը, այլեւ մասնավոր մյուս ընկերությունները: Դա ներկայումս ընթացքի մեջ է: Ո՛չ պետությունը, ո՛չ էլ կարգավորման հանձնաժողովն այդ գործընթացին միջամտելու իրավունք չունեն»,- հայտարարեց նախարարը: Նրա խոսքերով, առանձին տարածաշրջաններում սակագնի տարբերությունը խտրական մոտեցում է: «Մենք ներկայումս աշխատում ենք, որպեսզի Վրաստանի ողջ մասշտաբով սակագները հավասարեցնենք, եւ երկրի բոլոր քաղաքացիների համար սահմանվի միեւնույն սակագինը»,- ընդգծեց էներգետիկայի նախարարը:

# ԴԵՂՈՐԱՅՔԻ ԳԻՆԸ ԿԷԺԱՆԱՆԱ ՄԵԿ ԵՐՐՈՐԴՈՎ



***Վրաստանի «Գործընկերային հիմնադրամի» գործադիր տնօրեն Դավիթ Սագանելիձեի հայտարարությամբ, մոտ ժամանակներս դեղորայքի գինը առնվազն 30 տոկոսով կէժանանա:***

Նրա խոսքերով, դեղագործական նոր ֆաբրիկայի շահագործմամբ, դեղորայքը կդառնա մատչելի եւ էժան:

«Դեղագործական ոլորտում սկսված երկու նախագծերը, որոնց նպատակն է նվազեցնել դեղերի գները եւ, որին մասնակցում է «Գործընկերային հիմնադրամը», հաջողությամբ կատարվում են: Հավանաբար, բնակիչներն արդեն նկատել են, որ դեղորայքի գինը սկսել է նվազել: Կարծում եմ, որ մոտ ժամանակներս դեղերը առնվազն 30 տոկոսով կէժանանան: Իսկ երբ դեղագործական ֆաբրիկան լրիվությամբ շահագործվի, ապա դեղերի գինը կրկնակի կնվազի»,- հայտարարեց Դավիթ Սագանելիձեն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ԱՆՑՅԱԼ ՏԱՐԻ ԵՐԿՐՈՒՄ ԱՎՏՈՎԹԱՐԻ ԶՈՀ Է ԴԱՐՁԵԼ 602 ՄԱՐԴ




***2015 թվականին Վրաստանի մասշտաբով ավտովթարի զոհ է դարձել 602 մարդ, 9187-ը ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:***

Սույն տեղեկատվությունը ներքին գործերի նախարարության պաշտոնական տվյալների հիման վրա ներկայացրել է ոչ կառավարական «Անվտանգ ճանապարհների համար Վրաստանի ալյանս» կազմակերպությունը:

ՆԳ նախարարության պաշտոնական վիճակագրության համաձայն, անցյալ տարի Վրաստանում գրանցվել է 6432 ավտոճանապարհային պատահար: Այն 440-ով գերազանցում է 2014 թվականի ցուցանիշը: 2013 թվականի համեմատությամբ, գրանցված ավտովթարների թիվը ավելացել է 922-ով, իսկ 2012-ի համեմատությամբ՝ 1073-ով: 2012 թվականին ավտովթարի զոհ է դարձել 605 մարդ, 2013-ի զոհվածների թիվը հասել է 514-ի, 2014-ին՝ 511-ի:

2015 թվականին ավտովթարի զոհ դարձած 602 մարդկանց թվում 128-ը երեխաներ են:

2015 թվականին, ավտոճանապարհային պատահարների արդյունքում, Թբիլիսիում զոհվել է 90 մարդ, իսկ 3834-ը ստացել են մարմնական վնասվածքներ:



## ՍԿՍՎԵՑ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

*Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ խորհրդարանական եւ ոչ խորհրդարանական ընդդիմության կողմից առաջարկված ընտրական համակարգի փոփոխությունների փաթեթի քննարկմանը:*

*Փետրվարի 12-ին խորհրդարանի իրավաբանական հարցերի կոմիտեն սկսեց սահմանադրության եւ ընտրական օրենսդրության փոփոխությունների փաթեթի քննարկումը, որը խորհրդարանին 200 հազար ընտրողի ստորագրությամբ ներկայացրել է ընդդիմությունը:*

*Նախագծի համաձայն, փոխվում է ընտրական ներկայիս համակարգը, վերացվում է մեծամասնական ընտրահամակարգը, եւ խորհրդարանական 150 մանդատից 75-ը բաշխվելու է միասնական համամասնական ընտրակարգով, եւս 75-ը՝ տարածաշրջանային համամասնական ընտրակարգով:*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԴԱՆԴԱՂԵԼ Է

*Ինչպես տեղեկացրեց Վրաստանի վիճակագրության ազգային ծառայությունը, 2015 թվականին Վրաստանի տնտեսական աճը, նախորդ տարվա համեմատությամբ, կազմել է 2,8 տոկոս: 2014 թվականին երկրի ՀՆԱ-ի աճը կազմել է 4,6 տոկոս:*

*Վրաստանի Ազգային բանկի հայտարարությամբ, տնտեսական աճին խոչընդոտել են հիմնականում արտաքին գործոնները:*

*Տարածաշրջանի ծանր տնտեսական իրադրությունը բացասաբար է ազդում ապրանքների ու ծառայությունների արտահանման եկամուտների վրա: Տարվա ընթացքում տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին սպառմամբ, որը թուլացած է ստացվող դրամական փոխանցումների նվազման եւ օտարերկրյա արժույթով տրված վարկերի սպասարկման բեռի պատճառով, նշել են Ազգային բանկում:*

*Դեկտեմբերին Վրաստանի տնտեսական աճը, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 0,3 տոկոս:*

## «ՎՐԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ

*Ախալցիխեում տեղի ունեցավ «Վրաստանի զարգացման» հիմնադրամի տարածաշրջանային ներկայացուցչության բացման արարողությունը: Մասնաճյուղը բացեց հիմնադրամի հիմնադիր, հայտնի օպերային երգիչ Պաատա Բուրճուլաձեն:*

*Նա Ռաբաթի ամրոցում հանդիպում ունեցավ տեղի բնակիչների հետ, ունկնդրեց նրանց հուզող հիմնախնդիրները եւ առաջարկեց համատեղ աշխատանք ծավալել հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ:*

## ԱՃԵԼ Է ԵՐԿՐՈՒՄ ԲՌՆԱՑՈՂՆԵՐԻ ԵՎ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ

*Վրաստանի ազգային վիճակագրության տվյալներով, նախորդ տարվա համեմատությամբ, 2015 թվականին ընտանեկան բռնության զոհերի թիվը ավելացել է 2 հազարով: Աճել է նաեւ բռնացողների թիվը: Եթե 2014 թվականին որպես բռնացող գրանցվել է 750 մարդ, ապա անցյալ տարի դրանց թիվը հասել է 2568-ի:*

*Վիճակագրական ծառայության տարածած տվյալները հաստատում են նաեւ ՆԳ նախարարությունը: Ինչպես պարզաբանեցին գերատեսչությունում, տվյալների փոփոխումը պայմանավորված է նախարարությանը դիմողների թվի աճով, ինչը գերատեսչության կողմից սկսած սոցիալական քարոզարշավի արդյունքն է:*

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

# ԿԱԽԱ ՕՔՐԻԱՇՎԻԼԻ. «ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՄԵԾԱՑՆՈՒՄ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հրավիրված հյուրերի նման դասակարգման արդյունքում, բնականաբար, պարզվեց, որ ներկաների թվում միայն ես ունեի հարցի կապակցությամբ տարբերվող կարծիք: Հանդիպման մյուս մասնակիցները, առանց բացառության, համաձայնում էին մեծամասնական ընտրահամակարգի այս կամ այն ձեւով վերացման գաղափարի հետ: Ես ներկայացրի հիմնարար փաստարկներ եւ բերեցի օրինակներ աշխարհի առաջատար երկրներում գործող ընտրական համակարգերի պրակտիկայից: Հանդիպմանը հնչեցին գնահատականներ, որ մեծամասնական ընտրահամակարգը «միակողմ» է, «ոչ ժողովրդավարական», «դաշնային» եւ այլն:



Ես առաջադրեցի հարց. «Ինչո՞ւ այդ «ոչ ժողովրդավարական» մեծամասնական ընտրակարգը չեն վերացնում այնպիսի առաջատար եւ ժողովրդավարական երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան, Չեխիան, Հարավային Կորեան եւ ավելի քան հարյուր այլ երկրներ»: Ոչ մի փաստարկված պատասխան չլսեցի: Այսօր ցանկանում եմ կրկնել հարցը եւ սպասում հիմնավորված պատասխանի:

Սակայն, ամենազարմանալին այն էր, որ հանդիպումից հետո, որպես գնահատական, հնչեց այն գաղափարը, թե իբր հավաքվածները հասան հասարակական կարծիքի համաձայնության:

Ողջ պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ այդ հարցի կապակցությամբ հասարակական համաձայնություն իրականում գոյություն չունի: Այդ հարցի կապակցությամբ անտեսեցին պետական մտածելակերպ ունեցողներին:

Հիմա չեմ թվարկի համամասնական եւ մեծամասնական ընտրահամակարգերի բոլոր դրական եւ բացասական կողմերը: Ընտրական երկու համակարգերն էլ ունեն ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական կողմեր, եւ այդ մասին բոլորը քաջատեղյակ են: Ձեր ուշադրությունը կբեւեռեմ միայն մի քանի կետերի վրա:

Մեծամասնական ընտրահամակարգի գլխավոր մինուսը ընդդիմախոսները համարում են, այսպես կոչված, «ձայների կորուստը»: Հատկանշական է, որ երկու ընտրահամակարգերին էլ «ձայների կորուստը» բնորոշ է: Մեծամասնականում կորչում են պարտություն կրած թեկնածուների ձայները, իսկ համամասնականում այն կուսակցությունների օգտին տրված ձայները, որոնք չեն հաղթահարել ընտրական արգելագիծը: Օրինակ, Վրաստանի խորհրդարանի 1995 թվականի համամասնական ընտրություններում այդ ձեւով կորավ ձայների 61,5 տոկոսը: Այն ժամանակ էլ այսօրվա նման գործում էր 5 տոկոսանոց արգելագիծը: Հատկանշական է, որ, եթե այն ընտրություններում գործեր 4 տոկոսի արգելագիծը, միեւնույն է, ձայների 48,64 տոկոսը կկորչեր: Այս օրինակից երեւում է, որ համամասնական ընտրակարգում իբր ձայները չեն կորչում, չի համապատասխանում իրականությանը: Համամասնական ընտրակարգում էլ ձայները, այն էլ՝ մեծ քանակությամբ, կորչում են, առնվազն 10-15-ից մինչեւ 60 տոկոսը, ինչպես երեւաց վերոնշյալ օրինակում:

Մեծամասնական ընտրակարգի դեմ ծավալված այս քարոզարշավը խորհելու տեղիք է տալիս, որ տարբեր կուսակցությունների առաջին դեմքերը չեն ցանկանում իրենց կուսակցություններում ունենալ լիդերներ, նրանք վախենում են ներքին մրցակցությունից: Մեծամասնական ընտրահամակարգի պահպանումը նվազագույնը մեծացնում է քաղաքական մրցակցության որակը եւ ընձեռում բազմալիդեր քաղաքական կուսակցությունների հիմնման հնարավորություն: Մեծամասնականը իր բնույթով հանդիսանում է ընտրողների վստահության մանդատով լիդեր: Հետեւաբար, ելնելով քաղաքական կուսակցությունների շահերից՝ պետք է նման լիդերները կուսակցական կառույցում լինեն շատ եւ մեծանա ներքին մրցակցությունը: Արդյունքում ծավալվում եւ ուժեղանում է քաղաքական կուսակցությունը: Վստահությամբ կարելի է ասել, որ մեծամասնականների առկայությունը քաղաքական կուսակցությունների որակական զարգացման եւ Վրաստանի քաղաքական սպեկտրի առողջացման ու նորացման միակ ուղին է:

Երկրի կայուն զարգացման համար նշանակալից է քաղաքական ուժերի ճիշտ եւ հավասարակշռված կենտրոնացումը: Մենք տեսանք, որ իշխանության գերկենտրոնացումը հնարավոր է լինի շատ ուղղություններով Վրաստանի առաջընթացի խթանիչը, թեպետ դա մյուս կողմից նպաստում է բազում սխալների կատարմանն ու իշխանության շահարկմանը, ինչը դարձավ կառավարության ղեկից նախորդ իշխանության հեռացման պատճառը:

Մեր երկրի նորագույն պատմության ընթացքում մենք տեսանք, թե ինչպես կորցրեցինք տարածքներ կենտրոնական թույլ իշխանության ֆոնի վրա հզորացած անջատողականության պայմաններում: Գտնում եմ, որ Վրաստանի իրականության համար ամենաօպտիմալ ընտրական մոդելը խառը համակարգն է՝ համամասնական-մեծամասնականը: Այդ մոդելը նպաստում է խորհրդարանում քաղաքական ուժերի իրատեսական կենտրոնացմանը:

Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականները եւ ապա Սահմանադրական դատարանի որոշումը արագացրեց ընտրական համակարգի փոփոխությունները: Հետո տեղի ունեցավ մեծամասնական ընտրամարզերի հավասարեցում: Ինչ խոսք, այդ գործընթացում տրամաբանությունը առկա էր, թեպետ փոփոխությունները կատարվեցին արագ եւ բնակչության մեծ մասի համար մինչ օրս անորոշ է կատարած փոփոխությունների հիմնավորումը:

Բնականաբար, ընտրական օրենսդրության փոփոխությունը չի կարող իրականացվել սահմանադրությունից մեկուսացված: Ցանկանում եմ ձեր ուշադրությունը բեւեռել սահմանադրական այն փոփոխությունների վրա, որոնք կատարվեցին 2004 եւ 2010 թվականներին: Երկու դեպքում էլ փոփոխություններն անհատականացված էին եւ ծառայում էին կոնկրետ կուսակցության շահերին: Առաջին դեպքում, խորհրդարանի իրավունքների հաշվին տեղի ունեցավ նախագահի իշխանության ավելորդ հզորացումը, իսկ երկրորդ դեպքում,՝ նախագահական կառավարման մոդելը փոխվեց անորոշ կիսախորհրդարանական մոդելով: Ուստի գտնում եմ, որ երկրի սահմանադրական կարգի հարցը պետք է վերանայվի, քանի որ ներկայիս չհավասարակշռված խմբագրությամբ առաջիկայում կարող ենք ստանալ մի կողմից օրինականորեն անմիջական ընտրություններով ընտրված սահմանափակ իրավունքներով նախագահ, իսկ մյուս կողմից ոչ անմիջական, առավել եւս համամասնական կարգով պակաս օրինականությամբ (25-30 տոկոսով) ընտրված կառավարություն եւ աճած իրավասություններով շնորհված վարչապետ, ի տարբերություն ներկա դրության, երբ կառավարող քաղաքական ուժը իշխանության հասավ բարձր տոկոսայնությամբ: Ապագայում սահմանադրության նման խմբագրությունը կարող է հանգեցնել թյուրիմացության եւ ստեղծել քաղաքական ճգնաժամ: Ուստի, կամ նախագահը պետք է ընտրվի խորհրդարանի կողմից, կամ նա պետք է ունենա համեմատաբար շատ ավելի իրավասություններ:

Բնականաբար, այս ամենը խորհրդարանի եւ կառավարության իրավասությունների մեջ են մտնում, եւ մեր «անկուսակցական, անկախ մեծամասնականներ» խմբակցությունը պատրաստ է իր բաժինը ներդնել վերոնշյալին հասնելու գործում:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

# ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՅՑԵԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, անցյալ տարվա վերջին Ռուսաստանը միջոցներ ձեռնարկեց Վրաստանի քաղաքացիների համար այցեգրերի հանձնման համակարգի ազատականացման ուղղությամբ: Այն մասին, թե ինչպես է Վրաստանի քաղաքացիների համար իրականացվում ռուսական այցեգրերի դյուրացված կարգով հանձնումը, Sputnik-Georgia-ի հարցերին պատասխանում է Վրաստանում Շվեյցարիայի դեսպանատանն առընթեր Ռուսաստանի Դաշնության շահերի բաժնի ղեկավար Վադիմ Գորելովը:*

***- Պարոն Վադիմ, Վրաստանի քաղաքացիների համար ռուսական այցեգիր ստանալը բավականին բարդ էր: Ռուսաստան կարելի էր այցելել բացառապես միայն մոտ ազգականների հրավերով: Անցյալ տարվա դեկտեմբերի 23-ին Ռուսաստանը դյուրացրեց այցեգրերի ձեւակերպման համակարգը: Կոնկրետ ի՞նչ է փոխվել:***

- Փոփոխությունները բավականին նշանակալից են: Այժմ Վրաստանի քաղաքացին կարող է Ռուսաստան մեկնել հրավերով, անկախ նրանից, թե ազգակցական ինչ կապ ունի հրավիրող անձի հետ: Ձեւակերպվում են մասնավոր, ինչպես նաեւ ցանկացած տեւողությամբ գործնական, աշխատանքային, ուսումնական եւ հումանիտար այցեգրեր:

***- Ինչպե՞ս է տեղի ունենում այցեգրերի ստացման գործընթացը:***

- Մշտապես Ռուսաստանում ապրող Ռուսաստանի քաղաքացին կամ օտարերկրացին հրավերը ձեւակերպելու խնդրանքով դիմում է դաշնային միգրացիոն ծառայության բաժանմունքին՝ ըստ բնակության վայրի: Դրա համար կպահանջվի երեք շաբաթից ոչ ավելի ժամանակ, իսկ պետական մաքսը նման դեպքերում կազմում է 800 ռուբլի, որը ներկայիս կուրսով կազմում է 25 լարի:

***- Իրոք, գումարը մեծ չէ, թեպետ այդ հարցում էլ կարող են լինել շահարկումներ: Չէ՞ որ կարող են ի հայտ գալ մարդիկ, ովքեր կփորձեն քաղաքացիներից այցեգրերի ձեւակերպումների համար շորթել ավելի մեծ գումարներ:***

- Բացառված չէ, որ նմաններ լինեն: Թեպետ հուսով եմ, որ հրավերների ձեւակերպումը եկամտաբեր բիզնեսի չի վերածվի, այլ կդառնա մարդկանց միջեւ կապերի հաստատման գործիք: Ուղղակի դա կապված է հրավիրողի եւ հրավիրվողի դիրքորոշումից: Մեր խնդիրն է երաշխավորել, որպեսզի, հրավերի ձեւակերպումից եւ Ռուսաստան մուտք գործելուց հետո, հյուրերը դառնան ռուսական իշխանության հոգատարության օբյեկտ: Օրինակ, հրավիրողը ստորագրում է դիմում ֆինանսական եւ այլ երաշխիքների մասին: Մասնավորապես, առաջինը բուժման համար վճարումներն են: Ինչպես հայտնի է, բոլորը չէ, որ պարտադիր են համարում արտասահման մեկնելուց առաջ ապահովագրության ձեւակերպումը: Թեպետ հոսպիտալացման համար անհրաժեշտ գումարները երբեմն գերազանցում են տասնյակ հազարավոր ԱՄՆ դոլարները: Հենց այդ դեպքերի համար էլ պահանջվում է հրավիրողի երաշխիքը: Իմիջիայլոց, վերոնշյալ անձը կրում է նաեւ վարչական պատասխանատվություն իր հյուրերի եւ նրանց այցի վերաբերյալ կեղծ տեղեկատվությունների ներկայացման համար: Նման դեպքերում, տուգանքը ֆիզիկական անձանց համար կարող է կազմել 30-50 հազար, իսկ իրավաբանական անձանց համար՝ մինչեւ 400 հազար ռուբլի:

Ստանալով գրավոր կամ էլեկտրոնային տեսքով հրավերը՝ Վրաստանի քաղաքացին պետք է հերթագրվի փաստաթղթերի փաթեթի հանձնման համար: Դա կարելի է իրականացնել Ռուսաստանի ԱԳ նախարարության հյուպատոսական դեպարտամենտի կայքում կամ անմիջականորեն այցելելով շահերի բաժնի հյուպատոսական ծառայություն՝ ներկայացնելով անձնագիրը: Հրավերից բացի, հարկ է ներկայացնել հարցաթերթիկը, որը լրացվում է կայքում ու տպվում երկու օրինակով, անձնագիրը եւ երկու՝ 3x4 չափի լուսանկար:

Կայքում ներկայացված է նաեւ մանրամասն հրահանգ, որը դյուրացնում է այցեգրերի ձեւակերպման գործընթացը: Համակարգչին փոքրիշատե ծանոթ անձի համար, հարցաթերթիկի լրացնելը հիմնախնդիրներ չի առաջացնում: Որքանով տեղեկացված եմ, Վրաստանում գրեթե բոլորն ունեն համակարգիչ, եւ շատերը են բացել անձնական ֆեյսբուքյան էջեր:

Տեղեկատվությունն ինչպես ռուսերեն, այնպես էլ վրացերեն կարելի է ստանալ նաեւ շահերի բաժնի հյուպատոսական բաժանմունքում՝ զանգահարելով 2-91-26-75 հեռախոսահամարին: Մեզ կարող են դիմել էլեկտրոնային փոստով ստացված նամակում նշված ժամկետում: Աշխատանքային մեկ շաբաթվա ընթացքում սովորական այցեգրի ձեւակերպման համար գանձվում է պետական տուրք՝ 60 ԱՄՆ դոլար: Շտապ, մեկ-երկու օրվա ընթացքում ձեւակերպվող այցեգրի համար՝ 110 ԱՄՆ դոլար: Տարեկան բազմակի այցեգրի ձեւակերպման համար, համապատասխանաբար, հարկ է մուծել 160-310 դոլար: Մաքսատուրքն ընդունվում է տեղում՝ առձեռն եւ միայն ամերիկյան դոլարներով: Թեպետ մոտ ապագայում ծրագրվում է այն ընդունել նաեւ լարիով եւ բանկային քարտերով, ինչի համար կտեղակայվեն հատուկ տերմինալներ:

***- Խնդրում եմ պարզաբանել՝ ի՞նչ գործառույթ են իրականացնում շարժական այցեգրային ֆիրմաները, որոնցով բառացիորեն շրջապատված է Ռուսաստանի հյուպատոսական ծառայությունը:***

- Իրոք, մեր շրջապատում շատ են շարժական ֆիրմաները, որոնց աշխատակիցները պնդում են, թե սպասարկումներ են մատուցում ռուսական այցեգրերի ստացման համար: Նման ֆիրմաներ գործում են Թբիլիսիում, Վրաստանի առանձին քաղաքներում, մասնավորապես՝ Բաթումիում, Քութայիսիում, Ախալքալաքիում... Սակայն, մենք նրանց հետ ոչ մի առնչություն չունենք: Այդ մարդիկ իրենց ներկայացնում են որպես մեր միջնորդներ եւ հաճախ, խախտելով վրացական եւ ռուսական օրենքները, իրենց ներկայացնում են որպես մեր բաժնի պաշտոնատար անձինք: Հաճախ եմ լսել, որ նրանք իրենց ներկայացնում են որպես «հյուպատոսներ», ծայրահեղ դեպքում՝ «հյուպատոսության աշխատակիցներ»: Դա հիմարություն է: Պարբերաբար մուտք գործող փաստաթղթերի փաթեթում մենք հաճախ զարմանքով հայտնաբերում ենք Ռուսաստանի շահերի բաժնի կեղծված կտրոններ, որտեղ բավականին խոշոր գումարներ են եւ, որոնք իբր թե մեր կողմից ստացվել են ինչ-ինչ ծառայությունների համար: Ձեւաթղթերը շատ նման են մեր հյուպատոսականին, թեպետ դրանց վրա դրվում է մեզ համար անհայտ ձեռներեցի կնիքը: Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ այդ ֆիրմաները վերցնում են ոչ թե ձեւական 10-15 լարին, այլ բավականին մեծ գումարներ են շորթում, ինչը նշանակալիորեն գերազանցում է վրացական ընտանիքի միջին եկամուտը: Ողջ պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ այդ զեղծարարների հետ մենք ընդհանուր ոչինչ չունենք եւ ակտիվորեն պայքարում ենք նրանց դեմ:

***- Իսկ նոր պայմաններում փոփոխություններ կատարվե՞լ են Վրաստան մուտք գործող Ռուսաստանի քաղաքացիներին այցեգրերի հանձնման համակարգում:***

- Ոչ: Չնայած Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունները բացակայում են, Ռուսաստանի քաղաքացիները, Վրաստան մուտք գործելիս, օդանավակայաններում, սահմանային անցումակետերում վճարելով 30 ԱՄՆ դոլար, 5 րոպեում ստանում են այցեգիրը եւ հանգիստ մուտք գործում Վրաստան: